Հուսիկ Արա

Դատարկ եմ բոլոր ժամերի մեջ

Անձև ու դատարկ էի,
եկար և ասացիր՝ լույս լինի,
և դու եղար իմ մեջ .
տեսա, թե որքան կատարյալ եմ:
Ես, որ չգիտեի անգամ շողի մասին,
ինձ ցույց տվեցիր լույսը ու տարար քեզ հետ.
հիմա ինչպե՞ս խաղաղվեմ:

Այգեպան էի,
եկար և ասացիր՝
դու կարող ես հողից երկինք արարել.
ես նայեցի քեզ
ու քո տեսքով ստեղծեցի
և հիացա՝ իմ այգին դրախտի պարտեզն էր:
Ես, որ չէի տեսել իմ հողից վերև ոչ մի երկինք,
համտեսեցի իմացության ծառից,
և ինձ ուղարկեցիր երկիր.
հիմա առանց դրախտ ինչպե՞ս ապրեմ:

Ոչ ոք ու ոչ մի տեղ էի,
եկար և ասացիր՝ ե՛ս եմ,
իրական եմ, ոչ թե երազ.
հոգի եմ քո հոգուն,

և մարմին՝ քո մարմնի համար:
Ես, որ ոչինչ էի,
ինձ տվեցիր էություն՝
ա՛ռ և լցվիր,
ու չկաս,
և դատարկ է մարմինս բոլոր ժամերի մեջ:

Երբ ինձնից տարել ես իմ վերջին օրը,
հիմա ես ինչպե՞ս մեռնեմ .
ոչինչ չկար քեզնից առաջ
ու ոչինչն է քեզնից հետո: